



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2011 թվականի N 181-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N 7, 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 21, 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 441 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, 10-րդ հոդվածի 1-ին մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2011 թվականի ապրիլի 27-ի N 281-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2007 թվականի հունվարի 16-ի <<ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին>> N 7 որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 11-րդ կետի <<ե>> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<ե) Օրենքով սահմանված կարգով ապահովում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների առեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացումը.>>.

2) 11-րդ կետի <<է>> ենթակետի <<և կրտսեր>> բառերը հանել.

3) 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր <<է 1>>, <<է 2>> ենթակետերով.

<<է1) Աշխատակազմի քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար դիմումներ ներկայացնելու վերջնաժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, դիմում ներկայացրած, գործող հավաստագիր ունեցող և տվյալ կրտսեր թափուր պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիներից

մեկին առանց մրցույթի նշանակում է քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնում.

է2) Քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար դիմած և չնշանակված քաղաքացիների ցանկը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հտրհուրդ.>>.

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2007 թվականի մարտի 6-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> N 21 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման N 1 հավելվածի 11-րդ կետի <<ե>> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ

<<ե) քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իրականացնում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքները.>>.

2) որոշման N 2 հավելվածի 11-րդ կետի <<է>> և <<թ>> ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<է) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատակազմի առաջատար թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև Աշխատակազմի առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքներին.

թ) քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իրականացնում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հարցաշարերի հրապարակման աշխատանքները.>>.

3) որոշման N 3 հավելվածի 11-րդ կետի <<զ>> և <<ը>> ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<զ) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատակազմի առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև